դարձած են ուռենիների և բարդիների տնկարաններով, որոնց պատճառով էլ գիւղի այդ մասը ներկայացնում է գեղարուեստական մի հմայիչ պատկեր։

Ահա քո առաջ այդպիսի հրաշալի տեսարաններ է բաց անում Սվարան գիւղը, որ 311 տարուայ հիմնարկութիւն է. հարուստ է սառնորակ աղբիւրներով և արտերն ու արօտները ոռոգող առուներով, որոնք նշանակալից դեր են կատարում տնտեսական տեսակէտից։ Բացի այդ՝ գիւղի արևելեան և արևմտեան փէշերից հոսում են երկու փոքրիկ գետակներ, նրանցից մէկն սկիզբ է առնում Քէյլիզուց և Կէնջուց, իսկ միւսը՝ Ղանդահարից։ Այս երկու գետակները ոլորապտոյտ հոսելով առատօրէն ոռոգում են Սվարանի դաշտավայրերը, ապա գրկախառնուելով կտրում Սվարանը և գնում թափւում են Զալենդէրուզը։

Բնակիչները եկւորներ են, որոնք գաղթել են Հին—Զուղալի գիւղերից 1606 թուին, Շահ-Աբբասի ձեռքով. նրանք բարձրահասակ, քաջ և աշխատասէր ժողովուրդ են. պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մի փոքր էլ ալգեմշակութեամբ։ Սակայն գիւղը դրսի աշխարհից կտրուած լինելով, մնացել է ճակատագրին յանձնուած և մինչև այսօր զրկուած է եղել քաղաքակրթութեան բոլոր բարիքներից։ Այժմ բաղկացած է 80 տնից 638 շնչով, որի 364-ը արական է և 274-ը իգական։ Գիւղը շատ նեղուածք է. այդտեղ փողոցները անկանոն են և տները միմեանց կպած։

Հողատիրութեան ձևն «առբաբ»ի — կալուածատիրական է. պատկանում է Մամթաղի, Զաֆէր-Ղուլի, Աբբաս-Ղուլի խաներին և Յարութիւն Խաչիկեանի ժառանգներին*։ Գիւղացիներից միայն եօթը տուն հող ունեն, իսկ մնացեալները հողազուրկ են. նրանք մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. մօտաւորապէս վճարում են 576 բեռ ցորեն և գարի, 216 թուման էլ փող։ Բայց գիւղացիներն անտէր լինելով և գիւղում բացակայելով հաստատ

* Նոր—Զուղայի Ս. Ստեփաննոս եկեղեցին ևս մի հարթայ հող ունի այս գիւղում։